

ա) Աստղին առանդորքիւնը Ս. Իզնասիոս Աստուածագլեացի հաւանմայն. — Ս. Իզնատիոս (Բ. դար) կը գրէ **Յփեսացիներուն հետեւեալ կերպով**. «Աշխարհի մէջ ի՞նչպէս ճանչցուեցաւ այս աստղը որ երկինքի վրայ ծագեցաւ, և որ բոլոր աստղերէն աւելի պայծառ եւ փայլուն էր:

Թէ ի՞նչպէս անոր լոյսը անպատմելի էր, վասնզի տարօրինակ էր անոր տեսիլը:

Բոլոր աստղերը, ինչպէս արևն ու լուսինը այն աստղին շուրջ պար բռնած էին, վասնզի անոր լոյսը ամենէն առաւելն էր:

Եւ Տագևապ մը յառաջ եկաւ թէ ո՛ւրկէ էր անոր **սարօրինակ տեսքը որ ուրիշներուն նման չէր**(*)» (էջ 49, Տպ. Կ. Պոլիս, 1783):

Վերև մէջ բերինք Մատթ. Բ. 1-2, 4 և 9-10 համարները որոնց մէջ նկարագրուած Ս. Ծննդեան աստղին երևումը կը տեսնուի իր պարզութեան մէջ, սակայն Ս. Իզնատիոսի հատուածը առնուած կը թուի բերանացի աւանդութենէ կամ գրաւոր աղբիւրէ մը որ ծանօթ չէ: Կղեմէս Աղեքսանդրացին (ծն. 150, Աթէնք) իր գործին մէջ (Թէոդոտի գնոստիկեան զբոսուածներուն քաղուածոները, թուով 86) Ս. Ծննդեան աստղին գէպքը պարզած է այնպիսի լեզուով մը, որ մէ կը հասկցուի թէ Կղեմէս Աղեքսանդրացին վերի

(*) Ս. Իզնասիոսի այս հասուածը գրաբարէն աշխարհաբարի վերածելով հոս դրինք, ինչպէս բրած ենք յետագայ ուրիշ մեկնիչներու հասուածները:

Հայ քարգիտանիչին վերջին երեք տղերու ազգակ եւ նորոգութիւն բառերը փոխանակեցինք ազգնապ եւ տարօրինակ տեսք բառերով զոր տեսնք J. H. Stawley ի անգղիերէն քարգիտանութեան մէջ: